ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Հակոբ Արշակյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Արցախի Հանրապետություն, 2020թ. փետրվարի 17-ից 19-ը:

4. Հրավիրող կողմը.

Սեփական նախաձեռնությամբ:

5. Գործուղման նպատակը.

Ճանաչողական այց՝ երկու կողմերի միջև բարձր տեխնոլոգիաների, կապի, թվայնացման և ռազմարդյունաբերության ոլորտներում երկկողմ համագործակցությունը զարգացնելու ուղիներն ուսումնասիրելու նպատակով:

6. Քննարկված թեմաները.

Արցախ այցի ընթացքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանը հանդիպումներ է ունեցել Արցախի Հանրապետության (ԱՀ) նախագահ Բակո Սահակյանի, ԱՀ պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանի, ԱՀ պաշտպանության նախարար Կարեն Աբրահամյանի, ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար Լևոն Գրիգորյանի, ԱՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արշավիր Ղարամյանի հետ, ինչպես նաև այցելել է Արցախում գործող մի շարք ձեռնարկություններ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են կողմերի միջև համագործակցության ակտիվացան և խթանման հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ հանդիպման ընթացքում, որին ներկա է գտնվել նաև ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար Լևոն Գրիգորյանը, քննարկվել են ոլորտային համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Հատուկ ընդգծվել է Արցախում գիտատար ոլորտի զարգացման անհրաժեշտությունը: Հ. Արշակյանը նշել է, որ Արցախում կան ռազմարդյունաբերության ոլորտում գործող ընկերություններ, որոնք ունեն զարգացման ներուժ: Նա ընդգծել է, որ տեղում տվյալ ընկերությունների աշխատանքին ծանոթանալուց հետո իր համոզմունքն առավել է ամրապնդվել: Դիտարկվել են տվյալ ընկերությունների զարգացմանը նպաստելուն, աջակցելուն ուղղված քայլերն ու տարբերակները: Նշվել է, որ առկա են համատեղ ծրագրեր, որոնք կարող են ընդլայնվել:

Արցախի Հանրապետության պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանի հետ հանդիպման ժամանակ քննարկվել են Արցախում բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման վերաբերյալ հարցեր: Կողմերը կարևորել են գործնական քայլերի իրականացման անհրաժեշտությունը: Հանդիպման մասնակիցներն ընդգծել են նման ձևաչափով հանդիպումների կարևորությունը:

Հատուկ կարևորվել է ոլորտային մասնագետների փոխայցելությունների քանակի ավելացումը, ինչը բարենպաստ պայմաններ կստեղծի՝ տեխնոլոգիական ռազմարդյունաբերության, ինժեներական կրթության, ինչպես նաև ձեռներեցության զարգացմանն ուղղված ծրագրերում Արցախի երիտասարդության ներգրավվածությունն ապահովելու համար:

Այցի ընթացքում պատվիրակության անդամներն այցելել են Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն և տեղում ծանոթացել ոլորտի ձեռքբերումներին ու կենտրոնում գործող կազմակերպություններին:

Հ. Արշակյանի գլխավորած պատվիրակությունը եղել է նաև հյուսիսային առաջնագծի մարտական դիրքերում, որտեղ խումբը ծանոթացել է զինվորների առօրյային, զրուցել զինվորների և հրամանատարական կազմի հետ, իրական աշխատանքային պայմաններում ծանոթացել է ներդրված համակարգերին, դրանց արդյունավետությանը և խնդիրներին: Քննարկվել են նոր համակարգերով առաջնագիծը համալրելու հնարավորությունները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ:

1. Ռազմարդյունաբերության ոլորտ.
   - Առաջիկայում կազմակերպել Արցախի ռազմարդյունաբերական ընկերությունների այցը Երևան, դրանց տեղում ծանոթացնել ոլորտում մյուս ընկերություններին՝ փորձի փոխանակման և ներուժի օգտագործման համար: Պատասխանատու ստորաբաժանումը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ռազմարդյունաբերության կոմիտեն է:
   - Գույքագրել առաջնագծում քննարկված խնդիրները և հնարավորությունները, ներկայացնել դրանց լուծման համար առաջարկներ: Պատասխանատու ստորաբաժանումը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ռազմարդյունաբերության կոմիտեն է:
2. Բարձր տեխնոլոգիաների ոլորտ.

   Որոշվել է ստեղծել երկկողմ աշխատանքային խումբ, որը կներկայացնի համագործակցության զարգացման հետևյալ ուղղությունների վերաբերյալ առաջարկներ.
   - Բարձր տեխնոլոգիաների ոլորտում կրթական և վերապատրաստման ծրագրեր,
   - Բարձր տեխնոլոգիաների ոլորտում ձեռներեցների վերապատրաստման ծրագրեր,
   - Բարձր տեխնոլոգիաների ոլորտում դրամաշնորհային ծրագրեր,
   - Պետական ծառայողների համար փորձի փոխանակում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Հակոբ Արշակյան

20.02.2020թ.